

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է մրցույթի հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 31-ի թիվ 1 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի համաձայն

Մրցույթի ծածկագիրը՝ ԿՏԱԿ-ԱՊՁԲ-10/01

Պատվիրատուն՝ «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը, որը գտնվում է ՀՀ, ք. Երևան, Կրացյան 73 հասցեում, հայտարարում է բաց մրցույթ, որն անցկացվելու է մեկ փուլով:

Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել «Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցի պահպանման համար անհրաժեշտ սարքավորումների» գնման պայմանագիր (այսուհետև՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու «Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցի պահպանման համար անհրաժեշտ սարքավորումների» ձեռքբերումը:

Կնքվելիք պայմանագրի գործողության ժամկետը պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2010թ. սեպտեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7 հոդվածի պայմանների համաձայն՝ մրցույթի հայտեր կարող են ներկայացնել բոլոր անձինք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Մրցույթի հրավեր ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին մինչև սույն հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից հաշված՝ 28-րդ օրը, ժամը 15.00-ը:

Մրցույթի հրավեր տրամադրելու համար պահանջվում է վճար՝ 3000 ՀՀ դրամ գումարի չափով, որը պետք է փոխանցվի «Հայէկոնոմբանկ Սպանդարյան մասնաճյուղ» Հ/Հ 163048288407 հաշվեհամարին: Պատվիրատուն պարտավորվում է պահանջվող վճարը ստանալուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, մրցույթի հրավերը և նշված վճարի հաշվին կատարված ծախսերի անդորրագիրը տրամադրել մրցույթի հրավեր ստանալու պահանջ ներկայացրած անձին:

Մրցույթի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ, հասցեն՝ ք. Երևան, Կրացյան 73, 1-ին հարկ, ընդունարան, հեռ.՝ 57-84-55, մինչև սույն հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից հաշված 30-րդ օրվա ժամը 15.00-ը, և դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ մրցույթի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները պետք է պատվիրատուին ներկայացնեն մրցույթի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

*«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ*

## ОБЪЯВЛЕНИЕ

об открытом конкурсе

Данный текст утвержден решением N1 конкурсной комиссии от 31-го мая 2010г. и публикуется согласно 25-ой статье “Закона о закупках” РА.

Код конкурса НЦОТ-ПРТ- 10/01

Заказчик - ГНКО “Национальный центр образовательных технологий”, который находится по адресу: г. Ереван, ул. Врацяна 73 – объявляет открытый конкурс в один этап.

Победившему участнику конкурса по установленному порядку будет предложено подписать контракт о приобретении оборудования для поддержания “Интернетной сети школ Армении” (отныне контракт).

Предметом купли является необходимое оборудование для поддержания “Интернетной сети школ Армении”.

Срок выполнения контракта - период со дня вступления контракта в силу до 20-го сентября 2010г.

Согласно 7-ой статье “Закона о закупках” РА, заявку на участие в конкурсе могут подать все лица, независимо от обстоятельства, являются ли они иностранным физическим лицом, предприятием, лицом без гражданства.

Для получения приглашения на участие в конкурсе необходимо обратиться к заказчику до 15.00 в течение 28 дней, считая со следующего дня после опубликования данного объявления.

Для получения приглашения на конкурс необходима плата в размере 3000 драмов РА, которая должна быть перечислена в “Армэкономбанк, Спандарянский филиал” на расчетный счет 163048288407. После получения документов, утверждающих уплату указанной суммы, заказчик обязан в течение двух рабочих дней предоставить участнику приглашение на конкурс.

Заявки на участие в конкурсе, заполненные на армянском языке, необходимо предъявить в ГНКО “Национальный центр образовательных технологий”, по адресу: РА, г. Ереван, ул. Врацяна 73, I этаж, приемная, тел. 578455, до 15.00 ч. в течение 40 дней, считая со следующего дня после опубликования данного объявления.

Для сопоставления качественных характеристик участников конкурса с установленными в приглашении условиями участники должны предъявить заказчику необходимые документы.

ГНКО “Национальный центр образовательных технологий”

«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն»  
պետական ոչ առևտրային կազմակերպություն

### Հ Ր Ա Վ Ե Ր

«Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցի պահպանման համար անհրաժեշտ  
սարքավորումների» ձեռքբերման  
նպատակով հայտարարված մրցույթի

Հարգելի մասնակից.

Նախքան մրցույթի հայտ կազմելը և ներկայացնելը, խնդրում ենք մանրամասն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող մրցույթի հայտերը ենթակա են մերժման:

Սույն հրավերը տրամադրվում է ի լրումն «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» (ԿՏԱԿ) ՊՈԱԿ-ի անունից (այսուհետ՝ Պատվիրատու) «Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցի պահպանման համար անհրաժեշտ սարքավորումների» գնման (ձեռքբերման) նպատակով, ԿՏԱԿ-ԱՊՁԲ-10/01 ծածկագրով բաց մրցույթի (այսուհետև՝ մրցույթ) հայտարարությամբ:

Սույն հրավերը կազմվել է գնումների մասին օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենքի), ՀՀ կառավարության 17.12.2009թ. N 1521-Ն որոշմամբ հաստատված «Մրցույթի հանձնաժողովների կազմավորման և գործունեության» կարգի (այսուհետև՝ Կարգ) և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված մրցույթին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև՝ նաև Մասնակից) տեղեկացնելու մրցույթի պայմանների՝ գնման առարկայի, մրցույթի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու մրցույթի հայտը պատրաստելիս:

Մրցույթի հայտեր կարող են ներկայացնել բոլոր անձինք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Արգելվում է միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների:

Սույն մրցույթի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն մրցույթի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

## **ՄԱՍ Ի.**

### **1. Գնման առարկայի բնութագիրը**

Գնման առարկա է հանդիսանում «Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցի պահպանման համար անհրաժեշտ սարքավորումների» ձեռքբերումը:

Գնման առարկայի բնութագիրը կազմում է պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացվում է սույն հրավերի Հավելված 6-ում:

### **2. Մասնակցի որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը**

2.1. Մրցույթին մասնակցելու համար մրցույթի գործընթացի ցանկացած փուլում Մասնակիցը պետք է բավարարի սույն հրավերով սահմանված որակավորման չափանիշներին:

2.2. Օրենքի 5-րդ հոդվածի համաձայն Մասնակիցը.

ա) պետք է ունենա գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ.

բ) չպետք է դատական կարգով լինի անվճարունակ ճանաչված, չպետք է գտնվի լուծարման գործընթացում, չպետք է արգելանքի տակ ունենա պայմանագրի կատարման համար հայտով ներկայացված գույք:

գ) չպետք է մրցույթի հայտը ներկայացնելու օրվան նախորդող հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ ունենա ժամկետանց պարտքեր՝ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր վճարների գծով:

դ) Մասնակիցը կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում չպետք է՝

1) դատապարտված լինի տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

2) գնման պայմանագիր կնքելու նպատակով ներկայացրած լինի կեղծ տվյալներ,

3) իր գործողությամբ կամ անգործությամբ խախտած լինի գնման պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրած լինի Պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

Սույն կետի ա) ենթակետում նշված որակավորման չափանիշները կգնահատվեն ստորև բերված կարգով:

| N | Գնահատվող չափանիշների անվանումը   | Գնահատվող չափանիշների պահանջվող չափը     | գնահատականը                                |
|---|---|--|--|
| 1 | 2   | 3  | 4  |
| 1 | Նմանատիպ պատշաճ մատակարարված ապրանքների շրջանառության գումարը 2007թ. հունվարի 1-ից մինչև հայտը ներկայացնելու պահը՝ A: | A < 8 միլիոն դրամ<br>A ≥ 8 միլիոն դրամ   | Չի<br>համապատասխանում<br>Համապատասխանում է |
| 2 | Ֆինանսական միջոցների առկայությունը՝ F:  | F < 10 միլիոն դրամ<br>F ≥ 10 միլիոն դրամ | Չի<br>համապատասխանում<br>Համապատասխանում է |

Չափանիշներից որևէ մեկին չբավարարելու (տողերից որևէ մեկում «Չի համապատասխանում» գնահատական ստանալու) դեպքում Մասնակցի հայտը մերժվում է:

### 3. Մրցույթի հրավերի պարզաբանումը և մրցույթի հրավերում փոփոխություն կատարելու կարգը

3.1. Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ Մասնակիցն իրավունք ունի Պատվիրատուից պահանջել մրցույթի հրավերի պարզաբանում: Սույն հրավերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար Մասնակիցը կարող է դիմել Պատվիրատուին՝ գրավոր ձևով: Այդպիսի պարզաբանումների պահանջները կարող են ներկայացվել ոչ ուշ, քան մրցույթի հայտերի ընդունման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ աշխատանքային օր առաջ:

3.2. Պատվիրատուն պարզաբանումը տրամադրում է հարցումը ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում: Պատվիրատուն տրամադրված պարզաբանումները հրապարակում է պաշտոնական մամուլում, ինչպես նաև դրանց մասին գրավոր ծանուցում է մրցույթի հայտեր ներկայացրած Մասնակիցներին:

3.3. Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն հրավերի առաջին մասի 3.1. կետով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է մրցույթի հրավերի բովանդակության շրջանակից:

3.4. Մրցույթի հայտերի ներկայացման վերջնաժամկետից առնվազն հինգ աշխատանքային օր առաջ կարող են մրցույթի հրավերում փոփոխություններ կատարելու ձևով փոփոխվել գնման առարկայի բնութագրերը: Փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլում: Հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում մրցույթի հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին մամուլում հայտարարության հրապարակման օրվանից: Այդ դեպքում մասնակիցները պարտավոր են երկարաձգել իրենց ներկայացրած մրցույթի հայտի ապահովման գործողության ժամկետը կամ ներկայացնել մրցույթի հայտի նոր ապահովում:

3.5. Սույն բաժնի համաձայն կատարվող գործողությունների և դրանց արդյունքների մասին կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը:

3.6. Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել սույն հրավերին համապատասխան կազմակերպված մրցույթի անցկացումից ցանկացած ժամանակ՝ մրցույթի հայտարարության հրապարակման պահից մինչև մրցույթի հանձնաժողովի կողմից հաղթող ընտրելու մասին որոշման կայացումը:

#### **4.Մրցույթի հայտը ներկայացնելու կարգը**

4.1. Մրցույթին մասնակցելու համար Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում մրցույթի հայտ: Մասնակիցը չի կարող նույն մրցույթին ներկայացնել մեկից ավելի հայտ, բացառությամբ սույն հրավերի 5.2. կետով նախատեսված՝ հայտի փոփոխում ներկայացնելու դեպքի: Մրցույթի հայտը սույն հրավերի հիման վրա Մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Մրցույթի հայտերի պատրաստման կարգը նկարագրված է սույն հրավերի երկրորդ մասում՝ «Մրցույթի հայտերը պատրաստելու» հրահանգում:

4.2. Մրցույթի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Պատվիրատուին ոչ ուշ, քան մրցույթի հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 30-րդ օրվա ժամը 15:00, 375070 ք. Երևան, Վրացյան 73 «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ հասցեով: Ներկայացված մրցույթի հայտերն ընդունում, դրանց ներկայացման ճշտությունը ստուգում և ներկայացված մրցույթի հայտերը գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղարը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով Պատվիրատուն տրամադրում է հայտի ընդունման մասին տեղեկանք:

4.3. Պատվիրատուն պատասխանատվություն չի կրում փոստով ուղարկված մրցույթի հայտերի՝ վերջնական ժամկետից ուշ կամ բացված տեսքով կամ այլ կերպ վնասված ստանալու համար:

## **5. Մրցույթի հայտի գործողության ժամկետը, հայտերում փոփոխություն կատարելու և դրանք հետ վերցնելու կարգը**

5.1. Օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ մրցույթի հայտը վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից մրցույթի հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ մրցույթը չկայացած հայտարարվելը:

5.2. Օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ Մասնակիցը, մինչև սույն հրավերի 4.2. կետում նշված՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը, կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը:

5.3. Հայտում փոփոխությունների մասին ծանուցումն ուղարկվում է սույն հրավերի երկրորդ մասի «Մրցույթի հայտը պատրաստելու» հրահանգի 4.1. կետի պահանջներին համապատասխան կազմված ծրարով՝ դրա վրա ավելացնելով «փոփոխում» բառը: Հայտը հետ վերցնելու դեպքում Մասնակիցը, մինչև մրցույթի հայտերի բացումը, ներկայացնում է այդ մասին գրավոր ծանուցում:

## **6. Մրցույթի հայտի ապահովումը**

6.1. Մասնակիցը, մրցույթի հայտով, սույն հրավերով սահմանված կարգով, ներկայացնում է մրցույթի հայտի ապահովում: Մրցույթի հայտի ապահովման չափը կազմում է մրցույթի հայտով առաջարկվող գնի երկու տոկոսը:

6.2. Մասնակիցն իրավունք ունի, մինչև մրցույթի հայտը ներկայացնելը, պահանջել հաստատելու մրցույթի հայտի ապահովման ընդունելի լինելու հանգամանքը, որին կպատասխանվի նման հարցում ստանալուց երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Մրցույթի հայտի ապահովումը ներկայացվում է տուժանքի ձևով:

6.3. Մրցույթի հայտի ապահովումը չի վերադարձվում, եթե այն ներկայացնողը հայտարարվել է ընտրված Մասնակից, սակայն հրաժարվում կամ Օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն զրկվում է գնման պայմանագիր ստորագրելու իրավունքից:

## **7. Մրցույթի հայտերի բացումը**

7.1. Մրցույթի հայտերի բացումը կկատարվի մրցույթի հանձնաժողովի նիստում՝ մրցույթի հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 30-րդ օրվա ժամը 15:00-ին, ք. Երևան, Վրացյան 73 «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ հասցեում:

7.2. Օրենքի 33-րդ հոդվածի համաձայն՝ մրցույթի հայտերի բացման նիստում հրապարակվում են հայտ ներկայացրած յուրաքանչյուր Մասնակցի անվանումը (անունը), տեղեկություններ՝ հայտեր պարունակող ծրարների կազմման և ներկայացման՝ սույն հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ, տեղեկություններ՝ բացված յուրաքանչյուր ծրարում սույն հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ, տեղեկություններ՝ յուրաքանչյուր Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու վերաբերյալ, յուրաքանչյուր Մասնակցի առաջարկած գինը՝ տառերով և թվերով արտահայտված, տեղեկություններ՝ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների վերաբերյալ:

7.2.1 Կարգի 23-րդ կետի համաձայն՝ մրցույթի հայտերի բացման նիստում մրցույթի հանձնաժողովը գնահատում է՝

1) մրցույթի հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սույն հրավերով սահմանված կարգին և բացում համապատասխանող ծրարները.

2) բացված յուրաքանչյուր ծրարում մրցույթի հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը մրցույթի հրավերով սահմանված վավերապայմաններին.

3) առաջարկած գնման առարկայի տեխնիկական հատկանիշների համապատասխանությունը մրցույթի հրավերով սահմանված նվազագույն պահանջներին:

7.2.2. Հանձնաժողովի նախագահը հայտարարում է մրցույթի յուրաքանչյուր Մասնակցի գնային առաջարկը՝ մեկ թվով արտահայտված՝ հիմք ընդունելով տառերով գրվածը: Ներկայացված գնային առաջարկների հիման վրա որոշվում են 1-ին, 2-րդ, 3-րդ և այլ տեղեր զբաղեցրած Մասնակիցները:

7.2.3 Կարգի 23-րդ կետի 5) ենթակետի համաձայն՝ սույն հրավերի 7.2.1 կետով նախատեսված գնահատման արդյունքում անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում հանձնաժողովը մերժում է այդ հայտերը: Եթե առկա է անհամապատասխանություն Մասնակցի կողմից ներկայացված մրցույթի հայտի բնօրինակի և պատճենների միջև, ապա հանձնաժողովի կողմից գնահատման համար հիմք է ընդունվում հայտի բնօրինակը:

7.2.4 Կարգի 23-րդ կետի 6) ենթակետի համաձայն՝ սույն հրավերի 7.2.1 կետով նախատեսված մրցույթի հայտերը հանձնաժողովի կողմից գնահատվելուց հետո քարտուղարը մրցույթի հայտերի բնօրինակները հանձնաժողովի անդամների ներկայությամբ առանձնացնում և զույքագրում է: Հանձնաժողովի լուծարումից հետո քարտուղարը, սահմանված կարգով, ապահովում է մրցույթի հայտում ներառված փաստաթղթերի հանձնումն արխիվ: Պատվիրատուն մերժված հայտերի պատճենները վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց՝ հատուկ նիստին հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

7.3. Կարգի 23-րդ կետի 7) ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի նախագահը հրապարակում է օրենքով նախատեսված տեղեկությունները և հանձնաժողովի հաջորդ նիստի օրը, ժամը և նիստը հայտարարում փակված:

7.4. Կարգի 24-րդ կետի համաձայն՝ սույն հրավերի 7.2.1 կետով նախատեսված տվյալներին տրվում են հրավերով նախատեսված պահանջներին «Համապատասխանում է» կամ «Չի համապատասխանում» գնահատականները: «Համապատասխանում է» գնահատականը տրվում է, եթե մրցույթի հայտով Մասնակցի ներկայացրած տվյալները բավարարում են մրցույթի հրավերով դրա համար սահմանված նվազագույն պահանջները: Գնային առաջարկի և ինքնարժեքի հաշվարկման ճշտությունը գնահատվում է գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունն ու դրանց, ինչպես նաև ինքնարժեքի հաշվարկման (թվաբանական) ճշտությունը գնահատելու միջոցով: Թվերով և տառերով արտահայտված տվյալների միջև անհամապատասխանության դեպքում հիմք են ընդունվում տառերով արտահայտված տվյալները: Հաշվարկման (թվաբանական) անճշտությունների դեպքում, հիմք ընդունելով չափման միավորի ցուցանիշները, կատարվում է վերահաշվարկ:

7.5. Մրցույթի հանձնաժողովը մրցույթի հայտերը բացելուց հետո կազմում է արձանագրություն: Արձանագրությունը ստորագրում են մրցույթի հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Արձանագրությունը պարունակում է.

ա) տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

բ) հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու հասցեները.

գ) տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

դ) տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

ե) տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

զ) յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

է) մրցույթը չկայացած հայտարարվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.

ը) տեղեկատվություն՝ մրցույթի հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

թ) հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը

ժ) նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները

ճ) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

7.6. Մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել մրցույթի հանձնաժողովի նիստերին: Նրանք կարող են պահանջել մրցույթի հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճենները, որոնք տրամադրվում են մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Մրցույթի հայտերի բացման նիստի օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում մրցույթի հայտերի բացման նիստի արձանագրության պատճենները տրամադրվում են այն Մասնակիցներին, որոնք կան որոնց ներկայացուցիչները չեն մասնակցել այդ նիստին: Էլեկտրոնայի փոստի հասցեի առկայության դեպքում արձանագրությունն ուղարկվում է էլեկտրոնային եղանակով

## **8. Մրցույթի հայտերի գնահատումը և մրցույթի արդյունքների ամփոփումը**

8.1. Կարգի 25-րդ կետի համաձայն Կարգի 15-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը գնահատելու նպատակով հրավիրվող նիստում՝

1) քարտուղարը նախագահին է փոխանցում Մասնակցի ներկայացրած փաստաթղթերը և գնահատման թերթիկների երկուական օրինակներ.

2) սույն կետով նախատեսված գնահատման արդյունքում՝

ա. անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում նիստը համարվում է կասեցված, և Պատվիրատուն նիստի բացման հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում փաստաթղթերը ներկայացրած Մասնակցին գրավոր ծանուցում է անհամապատասխանության մասին՝ վերջինիս հնարավորություն տալով ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով ուղղել անհամապատասխանությունը: Սույն մասով նախատեսված ժամկետում անհամապատասխանությունը չչտվելու դեպքում հանձնաժողովը մերժում է հայտը: Պատվիրատուն մերժված հայտի պատճենը վերադարձնում է Մասնակցին՝ նիստին հաջորդող աշխատանքային օրը,

բ. անհամապատասխանություն չհայտնաբերելու դեպքում քարտուղարը փաստաթղթերի բնօրինակներն առանձնացնում և գույքագրում է, որից հետո փաստաթղթերի պատճենները, ներառյալ գնային առաջարկի և ինքնարժեքի հաշվարկները, տրամադրում է հանձնաժողովի նախագահին, ինչի մասին արձանագրության մեջ կատարվում է գրառում:

8.2. Հանձնաժողովի անդամը, հայտի գնահատումն իրականացնելիս, Մասնակցի որակավորման հատկանիշներին տալիս է հրավերի պահանջներին «Համապատասխանում է» կամ «Չի համապատասխանում» գնահատականները: «Համապատասխանում է» գնահատականը տրվում է, եթե Մասնակցի ներկայացրած տվյալները բավարարում են մրցույթի հրավերով դրա համար սահմանված նվազագույն պահանջները:

8.3. Կարգի 27-րդ կետի համաձայն սույն հրավերի 8.1. կետով նախատեսված փաստաթղթերի գնահատման արդյունքները, փաստաթղթերը և գնահատման թերթիկները Պատվիրատուն սահմանված կարգով արխիվացնում է:

Սույն կետով նախատեսված փաստաթղթերն ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, եթե գնահատման արդյունքներով Մասնակցի հայտը՝

ա. գնահատվել է հրավերի պահանջներին համապատասխանող, Պատվիրատուն օրենքով սահմանված կարգով Մասնակցին ներկայացնում է պայմանագիր կնքելու վերաբերյալ առաջարկ,

բ. գնահատվել է հրավերի պահանջներին չհամապատասխանող, ապա Կարգով սահմանված կարգով Պատվիրատուն փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած Մասնակցին: Ընդ որում, փաստաթղթերը ներկայացվում և գնահատվում են Կարգին համապատասխան:

8.4. Կարգի 29-րդ կետի համաձայն հանձնաժողովը կարող է որոշում ընդունել՝

1) Մասնակցից բացատրություններ պահանջելու մասին: Բացատրությունները չեն կարող հանգեցնել մրցույթի հայտի փոփոխությանը:

2) Մասնակցից պահանջել վերահաստատել իր որակավորման հատկանիշները: Մասնակցի որակավորման հատկանիշները համարվում են վերահաստատված, եթե նա հանձնաժողովին ներկայացնում է դրա մասին գրավոր հայտարարություն: Վերահաստատման շրջանակներում չեն կարող փոխվել մրցույթի հայտով ներկայացված փաստաթղթերը և (կամ) պահանջվել և (կամ) ներկայացվել մրցույթի հրավերով չնախատեսված փաստաթղթեր: Եթե ընտրված Մասնակիցը չի վերահաստատում որակավորման իր հատկանիշները, ապա նրա մրցույթի հայտը մերժվում է, իսկ մրցույթի հայտի ապահովումը չի վերադարձվում:

8.5. Սույն հրավերի 8.4. կետի կիրառման նպատակով հրավիրվում է հանձնաժողովի արտահերթ նիստ:

8.6. Այն դեպքում, երբ մրցույթի արդյունքում պայմանագիր չի կնքվում՝ պայմանավորված այնպիսի հանգամանքներով, որոնց համար կողմերը պատասխանատվություն չեն կրում, ապա նշված կողմերի միջև իրավահարաբերությունը դադարում է:

## 9. Պայմանագրի կնքումը

9.1. Մրցույթի հանձնաժողովի որոշման հիման վրա Պատվիրատուն ընտրված Մասնակցի հետ կնքում է գնման պայմանագիր: Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

9.2. Ընտրված Մասնակիցը հայտարարվելուց հետո հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում, Պատվիրատուն ծանուցում է ընտրված Մասնակցին՝ ներկայացնելով գնման պայմանագիր կնքելու առաջարկը և գնման պայմանագրի նախագիծը:

9.3. Եթե ընտրված Մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և գնման պայմանագրի նախագիծը ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում գնման պայմանագիրը և Պատվիրատուին ներկայացնում պայմանագրի կատարման, իսկ գնման պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում՝ կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է գնման պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագիր կնքելու առաջարկ ստացած, սակայն պայմանագիրը ստորագրելուց հրաժարված Մասնակիցը վճարում է մրցույթի հայտի ապահովումը:

9.4. Մինչև սույն հրավերի 9.3. կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը:

## **10. Պայմանագրի կատարման ապահովումը**

10.1. Ընտրված Մասնակցի հետ գնման պայմանագիր կնքվում է, եթե ընտրված Մասնակիցը, սույն հրավերով սահմանված կարգով, ներկայացնում է պայմանագրի կատարման ապահովում:

10.2. Պայմանագրի կատարման ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված Մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում:

10.3. Պայմանագրի կատարման ապահովման չափը հավասար է գնման պայմանագրի գնի 10 տոկոսին: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում ընտրված Մասնակցի կողմից պայմանագրի կատարման ապահովման փոխարեն ներկայացվող կանխավճարի ապահովման չափը հավասար է պայմանագրի գնի 10 տոկոսի և նախատեսված կանխավճարի չափի հանրագումարին:

10.4. Դրանի ձևով ներկայացված պայմանագրի կատարման ապահովումը, որպես ցպահանջ ավանդ, պահվում է լիազոր մարմնի անվանք բացված գանձապետական հաշվում:

10.5. Պայմանագրի ապահովման ձևերն են՝ բանկային, ապահովագրական ընկերության երաշխիքը և կանխիկ գումարը: Կանխիկ գումարի ձևով պայմանագրի կատարման ապահովում ներկայացնելու դեպքում անհրաժեշտ է սույն հրավերի 10.3 կետում նշված չափով ապահովումը փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի N 900008000011 հաշվին: Կանխիկ գումարի ձևով պայմանագրի կատարման ապահովում ներկայացնելու դեպքում անհրաժեշտ է ներկայացնել վճարումը հավաստող փաստաթղթի (վճարման հանձնարարական) բնօրինակը:

10.6. Օրենքի 36-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պայմանագրի կատարման ապահովումը վերադարձվում է այն ներկայացնողին՝ պայմանագրով նախատեսված ժամկետում:

## **11. Մրցույթը չկայացած հայտարարելը**

11.1. Օրենքի 38-րդ հոդվածի համաձայն՝ մրցույթի հանձնաժողովը մրցույթը չկայացած է հայտարարում, եթե՝

ա) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

բ) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը.

գ) ոչ մի հայտ չի ներկայացվել.

դ) ընտրված Մասնակցի առաջարկած գինը գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական հատկացումների չափը:

ե) մրցույթի արդյունքում գնման պայմանագիր չի կնքվում:

11.2. Մրցույթը չկայացած հայտարարվելուց հետո արգելվում է բացել չբացված հայտերը, որոնք վերադարձվում են Մասնակիցներին:

11.3. Մրցույթը չկայացած հայտարարվելուց հետո տեղեկագրում հրապարակվում է հայտարարություն՝ նշելով մրցույթը չկայացած հայտարարվելու հիմնավորումը:

## **12. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու Մասնակցի իրավունքը և կարգը**

12.1. Յուրաքանչյուր անձ ունի բողոքարկման իրավունք, եթե հայտարարում է, որ Պատվիրատուի և կամ մրցույթի հանձնաժողովի գործողությունների հետևանքով կրել է կամ կարող է կրել վնասներ:

12.2. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի՝

ա) բողոքարկել Պատվիրատուի և (կամ) մրցույթի հանձնաժողովի գործողությունները լիազոր մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, Օրենքի 53-րդ հոդվածի համաձայն.

բ) դատական կարգով բողոքարկել լիազոր մարմնի, Պատվիրատուի և (կամ) մրցույթի հանձնաժողովի գործողությունները՝ Օրենքի 56-րդ հոդվածի համաձայն:

**ՀՐԱՀԱՆԳ  
ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ**

**1. Ընդհանուր դրույթներ**

1.1. Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել Մասնակիցներին մրցույթի հայտը պատրաստելիս:

1.2. Նպատակահարմարության դեպքում Մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:

1.3. Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է Պատվիրատուին ներկայացնել մրցույթի հայտ, որը ներառում է.

- ա) սույն հրավերով նախատեսված կարգով մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող անձի կողմից նախապատրաստված և Պատվիրատուին ներկայացված մրցույթին մասնակցելու առաջարկը (Հավելված 1),
- բ) մրցույթի հրավերով նախատեսված որակավորման պահանջներին Մասնակցի համապատասխանության մասին հայտարարությունը (Հավելված 2),
- գ) գնային առաջարկը (Հավելված 3),
- դ) մրցույթի հայտի ապահովումը տուժանքի ձևով,
- ե) առաջարկներ գնման առարկայի տեխնիկական հատկանիշների վերաբերյալ,
- զ) էլեկտրոնային փոստի հասցեն:

1.4. Մրցույթի հայտերը (ներառվող բոլոր փաստաթղթերը, բացառությամբ սույն հրահանգի 2.3 կետում նշված դեպքերի), պետք է կազմված լինեն հայերեն:

**2. Որակավորման պահանջներին Մասնակցի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը**

2.1. Կարգի 15-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն հատուկ նիստի արդյունքների հրապարակման օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում մրցույթի հանձնաժողովի կողմից 1-ին տեղը զբաղեցրած ճանաչված Մասնակիցը մրցույթի հրավերով նախատեսված՝ որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար Պատվիրատուին է ներկայացնում պետական գրանցման վկայականի (բոլոր ներդիրներով) պատճենի նոտարական կարգով վավերացված օրինակը (եթե Մասնակիցը իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր է):

2.2. Սույն հրահանգի 2.1 կետում նշված վկայականին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

ա) Տեղեկանք Մասնակցի կողմից 2007թ. հունվարի 1-ից մինչև հայտը ներկայացնելու պահը նմանատիպ ապրանքների պատշաճ մատակարարման շրջանառության գումարի մասին (Հավելված 4): Նշված տեղեկանքին անհրաժեշտ է կցել նմանատիպ սարքավորումների մատակարարման պայմանագրերի և պատշաճ մատակարարումների հանձնման-ընդունման արձանագրությունների պատճենները կամ մատակարարված ապրանքների պայմանագրերի պատճենները և պայմանագրերի մյուս կողմի գրավոր հավաստումները ապրանքների պատշաճ մատակարարման մասին:

բ) 2009 թվականի ֆինանսական հաշվետվությունների պատճենները (1-ին, 2-րդ և շահութահարկի ձևերը)՝ հարկային տարածքային մարմին ներկայացրած ֆինանսական հաշվետվություններին համապատասխանության մասին տվյալ Մասնակցին հաշվառող հարկային տարածքային մարմնի կողմից կատարված գրառումով և կնքված հարկային պետական ծառայության կլոր կնիքով (բացառությամբ ընթացիկ տարում ստեղծված, ինչպես նաև այն կազմակերպությունների, որոնց համար ֆինանսական հաշվետվությունների նշված ձևերի ներկայացումը ՀՀ օրենսդրությամբ պարտադիր չէ), իսկ պարզեցված հարկ վճարող Մասնակիցները ներկայացնում են օրենսդրությամբ սահմանված պարզեցված հարկի հաշվարկները՝ սույն ենթակետի պահանջների պահպանմամբ (եթե Մասնակիցը իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր է):

գ) Տեղեկանք մրցույթի հայտը ներկայացնելու պահի դրությամբ առկա ֆինանսական միջոցների մասին (Հավելված 5), որին անհրաժեշտ է կցել բանկի կողմից կնքված քաղվածք Մասնակցի բանկային հաշվից կամ բանկի կողմից կնքված տեղեկանք Մասնակցի բանկային հաշվում առկա դրամական միջոցների մասին կամ բացված վարկային գծի մասին բանկի հետ կնքված պայմանագրի պատճենը և բանկի կողմից կնքված տեղեկանք՝ տվյալ պահին վարկային գծի առկա չափի մասին կամ դրամարկղային գրքի՝ դրամական միջոցների մնացորդի վերաբերյալ գրառում պարունակող բոլոր էջերի (ներառյալ դրամական միջոցների մնացորդի վերաբերյալ գրառում պարունակող վերջին էջի) պատճենները՝ ստորագրված և կնքված Մասնակցի կողմից: Սույն ենթակետում նշված՝ բանկային հաշվից քաղվածքը, բանկային հաշվում առկա դրամական միջոցների մասին տեղեկանքը վարկային գծի առկա չափի մասին տեղեկանքը և դրամարկղային գրքի վերջին էջի պատճենը պետք է կազմված լինեն առնվազն հայտը ներկայացնելու նախորդ աշխատանքային օրվա դրությամբ:

դ) Մասնակցին հաշվառող՝ հարկային, սոցիալական ապահովագրության, համապատասխան տարածքային մարմինների կողմից հաստատված (կլոր կնիքով կնքված) տեղեկանք Մասնակցի Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով ժամկետանց պարտքեր չունենալու մասին՝ որը տրվել է մրցույթի հայտարարության հրապարակման օրվանից մինչև մրցույթի հայտը ներկայացնելու պահը (եթե Մասնակիցը իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր է):

ե) Տեղեկանք համապատասխան տարածքային քաղաքացիական դատարանից՝ Մասնակցի անվճարունակ ճանաչված չլինելու մասին (եթե Մասնակիցը իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր է)՝ որը տրամադրվել է մրցույթի հայտարարության հրապարակման օրվանից մինչև մրցույթի հայտը ներկայացնելու պահը:

զ) Մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերի ցանկ, որը չի դիտարկվում որպես հրավերի պարտադիր պայման:

2.3. Մրցույթի հայտում ներառվող՝ աշխատակիցների աշխատանքային գրքույկների և դիպլոմների պատճենները /մասնակիցների ներկայացվող փաստաթղթերը/, որոնք տրամադրվել են խորհրդային ժամանակաշրջանում կամ հետխորհրդային ժամանակաշրջանում՝ Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից, կարող են կազմված լինել ռուսերեն լեզվով:

2.4. Հայտում ներառված բոլոր կնքված փաստաթղթերը պետք է ստորագրված լինեն կնքողի կողմից:

2.5. Հայտում ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նուտարական կարգով վավերացված օրինակները:

2.6. Եթե Մասնակիցը միևնույն օրը տարբեր մրցույթներին մասնակցելու համար ներկայացնում է հայտեր, որոնց միայն մեկ հայտում է ներառում մրցույթի հրավերներով պահանջվող նույն փաստաթղթի բնօրինակը (ընդ որում տվյալ հայտը ժամանակագրական առումով բացվում է առաջինը), իսկ մյուս հայտերում` պատճենը` նշելով իր կողմից ներկայացված այն հայտը, որում ներառված է բնօրինակը, և դա առկա նշված հայտում, ապա այդ հայտը մրցույթի հանձնաժողովի կողմից կարող է գնահատվել որպես մրցույթի հրավերի պահանջներին բավարարող:

2.7. Սույն հրահանգի բոլոր այն փաստաթղթերը, որոնք կնքվում (հրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատերի դեպքերում) և ստորագրվում են Մասնակցի կողմից, ինչպես նաև այն փաստաթղթերը, որոնք պահանջվել են, որ կնքված (հրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատերի դեպքերում) և ստորագրված լինեն տրամադրողի կողմից` պետք է կնքված և ստորագրված լինեն բնօրինակով, բացառությամբ սույն հրահանգի 2.6 կետում նշված դեպքերի:

### **3. Մրցույթի հայտի գնային առաջարկը**

3.1. Առաջարկվող գինը ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, տարածքների վարձակալման, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից:

3.2. Մրցույթի հայտի գինը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության դրամով:

3.3. Գնի վերաբերյալ առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել սույն հրավերի Հավելված 3-ով նախատեսված տեքստով, որին կցվում է առաջարկվող գնի ինքնարժեքի հաշվարկը:

3.4. Կարգի 15-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն եթե Մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի չափը: Ընդ որում, հանձնաժողովի կողմից 1-ին, 2-րդ, 3-րդ և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս` գնային առաջարկների համեմատումն իրականացվում է առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

### **4. Մրցույթի հայտերը պատրաստելու կարգը**

4.1. Մասնակիցը մրցույթի հայտը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով:

Մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը ստանձվում և կնքվում է այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և 2 օրինակ պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված` Մասնակցի կողմից կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս կողմից լիազորված անձը (այսուհետ` գործակալ): Եթե մրցույթի հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով

ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

4.2. Սույն հրահանգի 4.1 կետում նշված ծրարի վրա մրցույթի հայտը կազմելու լեզվով նշվում են՝

ա) պատվիրատուի անվանումը և մրցույթի հայտի ներկայացման վայրը (հասցեն).

բ) մրցույթի ծածկագիրը.

գ) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը .

դ) Մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

4.3. Սույն հրահանգի 4.1 և 4.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը մերժվում են և առանց բացվելու վերադարձվում ներկայացնողին:

«ԿՏԱԿ-ԱՊՁԲ-10/01» ծածկագրով  
մրցույթի հանձնաժողովին

**Մրցույթին մասնակցելու առաջարկ**

\_\_\_\_\_ հայտնում է, որ ցանկություն ունի  
Մասնակցի անունը (անվանումը)

մասնակցելու «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից  
«ԿՏԱԿ-ԱՊՁԲ-10/01» ծածկագրով հայտարարված մրցույթին և հրավերի պահանջներին  
համապատասխան ներկայացնում է մրցույթի հայտը:

Առդիր` \_\_\_\_\_ թերթ:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2010թ.  
(ամսաթիվը, ամիսը)

«ԿՏԱԿ-ԱՊՁԲ-10/01» ծածկագրով  
մրցույթի հանձնաժողովին

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### Մասնակցի որակավորման չափանիշների վերաբերյալ

\_\_\_\_\_ հայտարարում է, որ.

մրցույթի Մասնակցի անվանումը

ա) ունի գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ.

բ) դատական կարգով անվճարունակ ճանաչված չէ, լուծարման գործընթացում չի գտնվում, արգելանքի տակ չունի պայմանագրի կատարման համար հայտով ներկայացված գույք.

գ) մրցույթի հայտը ներկայացնելու օրվան նախորդող հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր՝ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր վճարների գծով.

դ) \_\_\_\_\_ ը կամ նրա ղեկավար մարմնի

մրցույթի Մասնակցի անվանումը

ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում՝

1) դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

2) գնման պայմանագիր կնքելու նպատակով չի ներկայացրել կեղծ տվյալներ,

3) իր գործողությամբ կամ անգործությամբ չի խախտել գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրած լինի պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

Առդիր՝ \_\_\_\_\_ թերթ:

\_\_\_\_\_ (անունը) (ղեկավարի պաշտոնը)

\_\_\_\_\_ (ստորագրությունը)

Կ. Տ.

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2010թ.  
(ամսաթիվը, ամիսը)

«ԿՏԱԿ-ԱՊՁԲ-10/01» ծածկագրով  
մրցույթի հանձնաժողովին

**Գնի առաջարկ**

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված \_\_\_\_\_ ծածկագրով  
(մրցույթի ծածկագիրը)

մրցույթի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը,

\_\_\_\_\_ -ն առաջարկում է  
(Մասնակցի անվանումը, անունը)

պայմանագիրը կատարել \_\_\_\_\_ ՅՅ դրամով:  
թվերով տառերով

Առդիր՝ \_\_\_\_\_ թերթ:

*Կից ներկայացվում է առաջարկվող  նի ինքնարժեքի հաշվարկը, այդ թվում՝  
առանձին տողով՝ ԱԱՀ, եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է:*

\_\_\_\_\_  
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը)

\_\_\_\_\_  
(ստորագրությունը)

Կ. Տ.

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2010թ.  
(ամսաթիվը, ամիսը)

4.

«ԿՏԱԿ-ԱՊՁԲ-10/01» ծածկագրով  
մրցույթի հրավերի

«ԿՏԱԿ-ԱՊՁԲ-10/01» ծածկագրով  
մրցույթի հանձնաժողովին

**ՏԵՂԵԿԱԼՔ**

**Մասնակցի կողմից 2007թ. հունվարի 1-ից մինչև հայտը ներկայացնելու պահը նմանատիպ սարքավորումների պատշաճ մատակարարման շրջանառության գումարի մասին**

Սույնով տեղեկացնում եմ, որ \_\_\_\_\_ 2007թ. հունվարի 1-ից  
մրցույթի Մասնակցի անվանումը

մինչև մրցույթի հայտը ներկայացնելու պահը մատակարարվել են \_\_\_\_\_  
\_\_\_\_\_, որոնց  
ծառայությունների անվանումները

շրջանառության ընդհանուր գումարը կազմել է \_\_\_\_\_  
\_\_\_\_\_ ԶԶ դրամ: տառերով

*Նշված տեղեկանքին անհրաժեշտ է կցել նմանատիպ ապրանքների մատակարարման պայմանագրերի և պատշաճ մատակարարված ապրանքների հանձնման-ընդունման արձանագրությունների պատճենները կամ մատակարարված ապրանքների պայմանագրերի պատճենները և պայմանագրերի մյուս կողմի թրավոր հավաստումները ապրանքների պատշաճ մատակարարման մասին:*

Առդիր՝ \_\_\_\_\_ թերթ:  
\_\_\_\_\_  
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը) (ստորագրությունը)

Կ. Տ.

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2010թ.  
(ամսաթիվը, ամիսը)

«ԿՏԱԿ-ԱՊՁԲ-10/01» ծածկագրով  
մրցույթի հանձնաժողովին

## ՏԵՂԵԿԱԼՔ

### Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ առկա ֆինանսական միջոցների մասին

Ֆինանսական  
Մասնակցի անվանումը  
միջոցները \_\_\_\_\_ դրությամբ կազմում են \_\_\_\_\_  
Ամսաթիվը, ամիսը, տարին \_\_\_\_\_ Թվերով  
Տառերով \_\_\_\_\_ ՀՀ դրամ:

Առդիր՝ \_\_\_\_\_ թերթ:

Կից ներկայացվում է բանկի կողմից կնքված քաղվածք Մասնակցի բանկային հաշվից կամ բանկի կողմից կնքված տեղեկանք Մասնակցի բանկային հաշվում առկա դրամական միջոցների մասին կամ բացված վարկային  ծի մասին բանկի հետ կնքված պայմանագրի պատճենը և բանկի կողմից կնքված տեղեկանք՝ տվյալ պահին վարկային  ծի առկա չափի մասին կամ դրամարկղային  ռքի՝ դրամական միջոցների մնացորդի վերաբերյալ  ռառում պարունակող բոլոր էջերի (ներառյալ դրամական միջոցների մնացորդի վերաբերյալ  ռառում պարունակող վերջին էջի) պատճենները՝ ստորագրված և կնքված Մասնակցի կողմից:

Բանկային հաշվից քաղվածքը, բանկային հաշվում առկա դրամական միջոցների մասին տեղեկանքը վարկային  ծի առկա չափի մասին տեղեկանքը և դրամարկղային  ռքի վերջին էջի պատճենը պետք է կազմված լինեն առնվազն հայտը ներկայացնելու նախորդ աշխատանքային օրվա դրությամբ:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2010թ.  
(ամսաթիվը, ամիսը)

**«Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցի պահպանման համար  
անհրաժեշտ սարքավորումների» գնման պայմանագրի նախագիծ**

ք. Երևան

«\_\_\_»\_\_\_\_\_2010թ.

«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Գնորդ), հանձնու տնօրեն Ա. Գրիգորյանի, մի կողմից, և \_\_\_\_\_, (այսուհետ՝ Մատակարար), հանձնու տնօրեն \_\_\_\_\_, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

**1. Պայմանագրի առարկան**

1.1. Գնորդը պատվիրում է/գնում է, իսկ Մատակարարը Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում (Պայմանագրի հավելված 2) մատակարարում է Պայմանագրի հավելված 1-ով՝ Գնման առարկայի բնութագրով նախատեսված սարքավորումներն ու նյութերը (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

**2. Մատակարարման պայմանները**

2.1. Պետք է պահպանվեն Գնման առարկայի բնութագրով առաջադրված բոլոր պայմանները:

2.2. Մատակարարը Ապրանքը հասցնում է (հանձնում է) Գնորդին (Ստացողին) վերջինիս նշած վայրում:

2.3. Ապրանքի մատակարարումը չի կարող կատարվել գործակալական պայմանագրի կնքման միջոցով:

**3. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

**3.1 Գնորդն իրավունք ունի՝**

3.1.1 Չընդունել Ապրանքը, եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրով սահմանված պահանջներին և Գնման առարկայի բնութագրին չհամապատասխանող Ապրանք՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինելու ողջամիտ ժամկետ և

պահանջելով Մատակարարից վճարելու Պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.2 Չընդունել Ապրանքը, եթե հանձնվել է Չնման առարկայի բնութագրում նախատեսվածից պակաս քանակի Ապրանք՝ պահանջել լրացնել մատակարարված Ապրանքի պակաս մասը և դրա համար սահմանել ողջամիտ ժամկետ, պահանջել Մատակարարից վճարել Պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.3 Մատակարարի կողմից մատակարարման ժամկետի խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Մատակարարից վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը, հրաժարվել հանձնված Ապրանքից և պահանջել վերադարձնել Ապրանքի համար վճարված գումարն ու վճարել Պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև հատուցել իր կրած վնասները, եթե Մատակարարն էականորեն խախտել է Պայմանագիրը:

3.1.4.1 Մատակարարի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի (քանակի) Ապրանք, որը չի կարող փոխարինվել (լրացվել) Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) Ապրանքի մատակարարման ժամկետը խախտվել է 10 օրից ավելի:

3.1.5 Մատակարարից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Մատակարարի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով ձեռք է բերել Ապրանք Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

3.1.6 Մատակարարի կողմից Պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Մատակարարից պահանջել հատուցելու հրաժարման հետևանքով պատճառած վնասը:

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Պայմանագրի գնի հիմնավորվածության և արժանահավատության փորձաքննության արդյունքում Պայմանագրի գինը որակվում է շուկայական գնից տասը տոկոս բարձր, և Պայմանագրի կողմը չի համաձայնում այդ չափով գնի նվազեցմանը: Ընդ որում Գնորդը չի կրում Պայմանագրի լուծման հետևանքով առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը:

3.1.8 Միակողմանի լուծել Պայմանագիրը այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության ընթացքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև Պայմանագրի կնքումը Մատակարարը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ Մատակարարին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Մատակարարի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Մատակարարը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի հատուցվում մինչև Պայմանագրի լուծումը Պայմանագրի կատարման ընթացքում Գնորդի ստացածով:

### **3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Ապրանքից Պայմանագրով նախատեսված կարգով հրաժարվելու դեպքում ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Մատակարարին:

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում Մատակարարին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարը, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 6.5 կետով նախատեսված տուգանքը:

3.2.4 Գնման առարկայի բնութագրով նախատեսված Ապրանքի որակի և քանակի պայմանները խախտելու մասին Մատակարարին ծանուցել թերությունը հայտնաբերելուց անմիջապես հետո կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով մատակարարված Ապրանքի բնույթից և նշանակությունից:

### **3.3 Մատակարարն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից (Ստացողից) պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետում մատակարարված Ապրանքը:

3.3.2 Գնորդից պահանջել վճարել Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետում մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքի համար վճարման ենթակա գումարը:

3.3.3 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Մատակարարը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով մատակարարել է Ապրանքը, Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը և Գնորդից պահանջել փոխհատուցել իր կրած վնասները, եթե Գնորդն էականորեն խախտել է Պայմանագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե Ապրանքի համար վճարման ժամկետը խախտվել է ավելի քան 10 օրով:

### **3.4 Մատակարարը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին հանձնել Պայմանագրով և Գնման առարկայի բնութագրով նախատեսված որակի և քանակի Ապրանք:

3.4.2. Ապրանքը Գնորդին մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետում և վայրում:

3.4.3. Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.4. Պայմանագրի հավելված 1-ի պայմանների խախտմամբ Ապրանքի մատակարարման դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, վերացնել թերությունները:

3.4.5. Հետ տանել Գնորդի կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում

տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն Մատակարարին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.4 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով Պայմանագրի լուծման դեպքում Գնորդին վճարել Պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը և հատուցել Գնորդին պատճառված վնասները:

3.4.5 Ապրանքի որակի և ծավալի խախտման դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, վերացնել թերությունները և վճարել տուգանքը:

#### **4. Պայմանագրի գինը և վճարման կարգը**

4.1 Պայմանագրով Մատակարարի կողմից հանձնած Ապրանքի ընդհանուր գինը կազմում է \_\_\_\_\_ (\_\_\_\_\_) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Մատակարարի կողմից իրականացվող բոլոր այլ ծախսերը:

4.2 Գնորդն իրեն մատակարարած Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Մատակարարի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

#### **5. Ապրանքի հանձնման և ընդունման կարգը**

5.1 Մատակարարը Ապրանքը հանձնում է Պայմանագրի հավելված 1-ում նշված ժամկետում:

5.1.2 Մատակարարը Ապրանքի հանձնումից հետո Գնորդին է ներկայացնում իր կողմից ստորագրված Ապրանքի հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակները (Պայմանագրի հավելված 2):

5.2. Գնորդը Հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում Մատակարարին է ներկայացնում իր կողմից ստորագրված Հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու հիմնավորումը:

5.3 Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում երկկողմանի Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

#### **6. Կողմերի պատասխանատվությունը**

6.1 Մատակարարը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի՝ Պայմանագրով նախատեսված որակի, քանակի և ժամկետի պահպանման համար:

6.2 Մատակարարի կողմից Պայմանագրով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Մատակարարից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տուգանք՝ Ապրանքի գնի 0,1%-ի չափով:

6.3 Գնման առարկայի բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու դեպքում Մատակարարից գանձվում է տուգանք Պայմանագրի ընդհանուր գնի 5,0%-ի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը, բացառությամբ Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված դեպքի, հաշվարկվում և հաշվանցվում է Մատակարարի կողմից մատակարարված Ապրանքի համար վճարման ենթակա գումարներից:

6.5 Գնորդի կողմից Պայմանագրի 3.2.3 կետով նախատեսված վճարման ժամկետի խախտման դեպքում յուրաքանչյուր ուշացված օրվա համար Գնորդի նկատմամբ հաշվարկվում է տուգանք՝ վճարման ենթակա գումարի 0,05%-ի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տուգանքների վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## **7. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (Ֆորս-մաժոր)**

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **8. Երաշխիքային սպասարկում**

8.1. Մատակարարը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակը և տրամադրում վեց ամսվա երաշխիքային սպասարկում:

### **Եզրափակիչ դրույթներ**

9.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից այն ստորագրելու պահից և գործում մինչև կողմերի կողմից պայմանագրային պարտավորությունների լրիվ կատարումը:

9.2 Պայմանագիրը, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի, կգործի Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցների նախատեսման դեպքում:

9.3 Պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կկազմի Պայմանագրի անբաժանելի մասը:

9.5 Պայմանագրի շուրջ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.6 Պայմանագիրը կնքվում է երկու հավասարազոր օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9.7 Կողմերի՝ Պայմանագրում չնշված իրավունքները և պարտականությունները կարգավորվում են Հայաստանի օրենսդրությամբ:

9.8 Պայմանագրի կատարման ապահովումը վերադարձվում է Մատակարարին 5.3 կետում նշված Ամփոփիչ հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո 10 օրվա ընթացքում:

## **10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**

**ՄԱՏԱԿԱՐԱՐ**

«Կրթական տեխնոլոգիաների ազգային  
կենտրոն» ՊՈԱԿ

ք. Երևան, Վրացյան 73

Հայէկոնոմբանկ, Սպանդարյան մասնաճյուղ

Հ/Հ 163048288407

ՀՎՀՀ 01550374

Տնօրեն

\_\_\_\_\_ Ա. Գրիգորյան  
(ստորագրություն)

Կ.Տ.

ԳՆՄԱՆ ԱՈՒՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| N | Անվանում               | Քանակ  | Բնութագիր  |
|---|------------------------|--------|--|
| 1 | Ռադիոկամուրջ 1         | 69 հատ | Ռադիոկամուրջ <b>Cisco AIR-AP 1200 series:</b> (1, 2, 5.5, and 11 Mbps, IEEE 802.11b, 802.11G, 802.11H, 2.412 to 2.472 GHz; 13 channels Range: Up to 40 km - 2 Mbps, <b>Interfaces</b> 1 x Network - Ethernet 10Base-T/100Base-TX - RJ-45 - 1 , 2 x Network - Radio-Ethernet - RP-TNC - 2 , 1 x Network - Radio-Ethernet , 1 x Management - RS-232 - RJ-45 – 1, <u>Manageable</u> , <u>DHCP support</u> , <u>BOOTP support</u> , <u>Modular design</u> (antennas optional, none supplied with unit) կամ համարժեքը |
| 2 | Ռադիոկամուրջ 2         | 2 հատ  | Ռադիոկամուրջ <b>Cisco AIR-AP 1310 series:</b> ( <i>Outdoor Access Point/Bridge, 1, 2, 5.5, and 11 Mbps , DHCP support , Load balancing , VLAN support, Radius, SNMP 1 , Telnet , SNMP 2 , HTTP IEEE 802.11b, 802.11G, 802.11H, 2.412 to 2.472 GHz; DHCP support , Load balancing , VLAN support, ext. power injector, 13 channels Range: Up to 40 km - 2 Mbps, two RP-TNC connectors (antennas optional, none supplied with unit) կամ համարժեքը</i> )  |
| 3 | Ռադիոնոդեմի ալեհավաք 1 | 20 հատ | Ռադիոնոդեմի ալեհավաք <b>2.4 GH, 24 Dbi Parabolic Antenna</b> with 20m Cable, N-type male/female Connectors կամ համարժեքը   |
| 4 | Ռադիոնոդեմի ալեհավաք 2 | 2 հատ  | Ռադիոնոդեմի ալեհավաք <b>2.4 GH, 15 Dbi OMNI Antenna</b> , 360 gr. with Cable, N-type male/female Connectors կամ համարժեքը  |
| 5 | Մալուխ 1               | 50 հատ | Կարճ մալուխ միացուցիչներով, 2.4 ԳՀց (50 OHM, DB loss 2.4 Ghz - 24.74 dB/100, Central conductor Cu. Diameter 2.74)  |
| 6 | Մալուխ 2               | 600 մ  | Մալուխ UTP 5e(Cu, Characteristic Impedance (Zo) (1~100MHz)   |
| 7 | Միացուցիչ              | 20 հատ | Միացուցիչ 2.4 ԳՀց connector (N type male - SP sma male)  |
| 8 | Հաղորդալար             | 1000 մ | Էլեկտրական հաղորդալար (գույգ, պղինձ, 5մմ <sup>2</sup> )  |

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ՑԱՆՑԻ ՊԱՅՊԱՆՄԱՆ  
ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ»

**ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

|  |                               |
|--|-------------------------------|
| Գնման առարկայի անվանումը   | Մատակարարման<br>ժամկետը       |
| Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցի<br>պահպանման համար անհրաժեշտ սարքավորումներ | մինչև 2010թ.<br>սեպտեմբերի 15 |

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ՑԱՆՑԻ ՊԱՐՊԱՆՄԱՆ  
ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ»

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

| Գնման առարկայի անվանումը  | Վճարման ժամկետը               |
|---|-------------------------------|
| Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցի պահպանման համար անհրաժեշտ սարքավորումներ | մինչև 2010թ.<br>սեպտեմբերի 20 |

Մատակարար

Գնորդ

հասցե՝ \_\_\_\_\_

հասցե՝ \_\_\_\_\_

ՀՀ \_\_\_\_\_

ՀՀ \_\_\_\_\_

ՀՎՀՀ \_\_\_\_\_

ՀՎՀՀ \_\_\_\_\_

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՄՍԱՆ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

\_\_\_\_\_ 2010թ.

Պայմանագրի անվանումը՝ «Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցի պահպանման համար անհրաժեշտ սարքավորումների» գնման պայմանագիր:

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «\_\_» «\_\_\_\_\_» 2010 թ.

Գնորդը հանձինս «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման «\_\_» «\_\_\_\_\_» 2010թ. եզրակացությունն այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ապրանքը (այսուհետ՝ Ապրանք) համապատասխանում է պայմանագրով ամրագրված գնման առարկայի բնութագրին և գնման ժամանակացույցին՝ և Մատակարարը՝ հանձինս \_\_\_\_\_, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Մատակարարը մատակարարել է հետևյալ Ապրանքը.

| Ապրանքի համառոտ բնութագիրը | Քանակական ցուցանիշները | Ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|----------------------------|------------------------|---------|-------------------------------------|--------------------------------------|
|                            |                        |         |                                     |                                      |
|                            |                        |         |                                     |                                      |
| Ընդամենը                   | -----                  | -----   |                                     | -----                                |

Վերոհիշյալ Ապրանքի մատակարարման վերաբերյալ հաշիվ-ապրանքագիրը հանդիսանում է սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում է:

Ծառայությունը հանձնեց

Ծառայությունն ընդունեց

\_\_\_\_\_  
(ստորագրություն)

\_\_\_\_\_  
(ստորագրություն)

ազգանուն \_\_\_\_\_

ազգանուն \_\_\_\_\_

Կ.Տ.

Կ.Տ.